85. ՃԸԿԸՏԱԿՅԻՐԸ ՍՈՏ Ա

Իլալ ա, չիլալ մին թաքավեր։ Էտ թաքավերեն մին մադար տղա յա իլալ։

Տղան հորն ասըմ ա.—Ապա, թուլ տո, քու երգյիրըտ շոռ կյամ։

Թաքավերն ասըմ ա.— Հի՞նչ կինի՞, վերթի, քյինա, քյըրեզ կհարկին։

Էտ տղան հղե յա ինըմ, քյնամ։ Ըսկսըմ ա շոռ կյալը, քյինըմ ա տեսնըմ մին ծմակու ղրաղե մին կրակ, մին տղա կոխքեն նստած, մին քանե թոխտ քշտեն։ Էրկու թոխտ ա կյիրում, մինը քըցում կրակը, մինը տինում քշտեն։ Քյնամ ա էտ տղեն պարով տամ, քշտեն միկա վրեննը կենում, ետնան հըրցընըմ։

Ասըմ ա.— Էտ հի՞նչ ըս անում, ախպեր, կյիրում ըս, կրակ տա՞մ։

Էտ տղան ասում ա.— Ցրես մարթկանց ճըկըտակյիրն ըմ կյըրմ։

Ասըմ ա.— Դե պեց ըրա իմ ճըկըտակյիրս տեսնամ։

Էտ տղան պեց ա անըմ, կարթըմ, ասըմ ա.— Քյիննական ըս, թա մին ախճիգյ օղիս, հըղեցը քյըրեզ ըսպաննական ըն։

Ասում ա.— Պա յրես մադար տղա յըմ, ումրուրս պատառ էրկընցրու։

Էտ կյրող տղան ասըմ ա.— Կա մին կուտուր հաց, պատառ աղ կեր, հինչ տիժեր տեղ ընգնիս, կասիս՝ «Տու ինիս մեր ըղրհացը»։

Տղան հղե յա ինում։ Քյնամ ա, քյնամ, տեսնըմ մին քանե վըերսկաննի յըն կյամ։ Մինին խտտին մին ջեյրան։ Էտ ջեյրանը ըտրան շատ ա տուր կյամ։ Ետ ա տեռնում, կյամ տոն, հորը կոշտը։

Հորն ասըմ ա.— Ա՛ հա՛ր, շատ շոռ եկե, վեչ մին պեն ինձ տուր չի եկավ, մինա՛կ վըերս անիլը ինձ տուր եկավ։ Թող մին հետ քյինիմ վըերսի։

Թաքավերը հրամայըմ ա քըռասուն վըերսկան պադրաստ կյան կոշտը։ Էտ տղեն անավ քառասունըմին հոքի քյինում ըն վըերս։ Էտ տղան քյինա՛լիս մին ջեյրան ա տեսնըմ փըխչիլիս։ Ջեյրանը նի յա մննում ծմակը։

Տղան հրամման ա տաս. — Շրջըպըտեցեքյ շեյրանեն, հուր քշտավ փախչի, կարե վուչ փռնե, ըսպննական ընք։

Նի յըն մըննըմ ծմակը չորք անգյունը կտրըմ։ Ջեյրանը կյամ ա թաքավերեն ժռանգյին կլխավը լոք տալավ անց կենում։ Լոխ հըվաքվում ըն, վեր թաքավերեն տղեն սպանին, վեր կըրացալ չի փռնե։

Թաքավերեն տղան ասըմ ա.— Յըես ատկազ չըմ անըմ ծեր խոսկը, մինա՛կ ինձ էրկու օր մոհլաթ տվեք, քյինիմ ջեյրանը սաղ փռնիմ, պիրիմ։

Եր ա ինըմ ծին, քյընըմ։

Քյինում ա, թա փռնե, ջեյրանը կլոխ ա ընգնըմ։ Էրկու օրը թմամըմ ա, կարըմ չի փռնե, ջեյրանը փախչում ա։

Մին ճրա՛վ անց ա կենըմ, խմըմ, վըեննը կախ ա անըմ, վըեննը փոշ ար նի մըտալ։

Մին թա՛հրա՛վ քյինա՛մ ա մին պառավ կնգա կոշտ, ղաչանք անում, թա՛.— Հետաս կյվող կա, վեննես փոշը տուս կալ, փախչիմ։

Պառավն ասըմ ա.— Քյըեզ կործ չունիս, փոշը տուս կունիմ, տու իմ քշտես կաց։ Յըես թողիլ չըմ քյըեզ ծեռք նի կյա։

Տղեն աշկը նի յա ընգնում, քյինում ա թուշ պառավեն կոշտը։

Պառավը կզնվըմ ա, ասըմ ա.— Ա՛ տղա, էտ հի՞շքան ա աշկտ օնքետ կլխան իլա՛ծ, վեր օղում ըս սաղ ջեյրան փռնի՞ս։

Տղան սվիրես կլոխ ա յոր օնում, քյինում, էլ հնգերունցը իրեսը չի տուս կյամ։

Քյինա՛մ ա մին տոն, ղոնաղ ընգնում, տանը մին ախճիգյ, մին կնեգյ ա ինում։ Ըխճրկանը յրան սիրահարվում ա, յոր ա օնում, թա՛ կյա տոն, հըղրցըմը ուրա՛ն հնգյերունքը օղում ըն թա՛ սպանին։

Տղան ասըմ ա. — Տուք ինիք մեր կերած ըղրհացը։

Էս վեր ասըմ ա, հընգեր վըերսկաննեն ըտրան բրախ ըն տամ, տա քյընըմ ա հանըմ ուրա՛նց տոն։